

ՊՈԼՍԱՀԱՅ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ ժամանեց պոլսահայ զբոսաշրջիկների մի խումբ՝ հատուկ այցելությամբ շնորհավորելու համար Վեհափառ Հայրապետի գահակալության երեսնամյակը: Խմբի ղեկավար տիար Կիսրպիս Ուղուրլյանը դիմելով Վեհափառ Հայրապետին՝ ասաց.

«Վեհափառ Տեր, Հայրապետ բարի,

Երջանիկ ենք և շնորհապարտ, որ Ձերդ Ս. Օծությունը բարի եղավ այսօր ընդունել իր բարձր ներկայության՝ իսթանպուլահայ ժողովուրդեն՝ այս համեստ հույլը: Ուխտավորներ են անոնք՝ որ իջեր են Ս. Էջմիածին, իրենց հավատքի լուսաբևեռ Ս. Խորանին:

Մեր հոգիներու խորերեն կհայտնենք մեր երախտագիտությունը:

Ակնածանքով կխոնարհինք Ձեր Սուրբ Օծության առջև: Եկեր ենք Ձեր Սուրբ և Օծյալ Աջեն մաս ու նշխար առնելու, Ս. Էջմիածնի օրհնությունն ստանալու, Լուսավորչի կանթեղին շողակաթումներեն ցոլքեր ըմբոշխնելու:

Ցանկալի էր մեկի համար, որ Ձերդ Վեհափառության երեսնամյա գահակալության շքեղ հանգրվանի հանդիսություններուն՝ կարենայինք ներկա գտնվիլ և Ձեր թանկագին ու առաքելաշնորհ Անձին ուրախությունը բաժնել, խնդակցիլ հոգևին: Բայց այդ հնարավոր չեղավ: Փույթ չէ՛, կըսենք սակայն, որովհետև այդ հանդիսություններու սրբական տպավորությունները երկարաձիգ են և մեկ ալ կպահեն իրենց պարունակին մեջ:

Վեհափառ Տեր, շնորհավո՜ր ըլլա երեսուներորդ բարեբաստիկ տարեդարձը Ձեր գահակալության, երջանկության և կենսունակության նոր աղբյուրներ բանա Ձեր Սրբության առջև, դեպի բազում տարեդարձներ:

Գիտենք, թե ինչպե՛ս Ձեր Ս. Օծությունը կաղոթե մեր լուսերգակ Նարեկացիի աղոթքի մրմունջներուն չափ փափուկ ու ներշնչող վերացումներով, աշխարհի խաղաղության և բոլոր ժողովուրդներու քաղցր եղբայրակցության համար:

Ձերդ Վեհափառությունը սիրո և լույսի թրթռումներով օծուն իր սքանչելի քարոզներով, շուրջ քառորդ դար առաջ, շինիչ ու հստակ էր ըրեր մեր հավատքի աղբյուրները ու փոխանցեր էր մեկի համամարդկային գաղափարականը՝ Աշխարհի Լույսին՝ Քրիստոսի: Իսթանպուլահայությունը չի՛ մոռնար երբեք Ձեր առաքելաշնորհ Անձին շնորհաբեր այցը մեր սիրելի երկիրը՝ Թուրքիա, երջանկահիշատակ Տ. Գարեգին Պատրիարք Խաչատուրյանի օծման և

հուղարկավորության նախագահելու և անկրկնելի շուք ընծայելու սրբական առաջադիմությամբ:

Գիտենք, թե Ձեր Սրբությունն ալ կհիշե միշտ այդ բարի այցը, իսթանպուլահայության փարումն ու սիրակեղուն ընդունելությունը, նաև այն ջերմագին ընդունելությունը, զոր ընծայեց Ձեր բարձր Անձին մեր գեղեցիկ երկիրը, ուր կապրինք բարօր կյանք, կվայելենք ամեն բարիք, կրոնական, կըրթական և մշակութային մեր ապրումներուն և զարգացումներուն լիակատար ամբողջության և կենսուրախ դրության մեջ:

Մեր այս խոսքերը ներկա ուխտավորներուն զգացումներուն թարգման կհանդիսանան, միևնույն ատեն՝ կցոլացնեն ու կփոխանցեն նաև ամբողջ իսթանպուլահայության զգացումները:

Կմաղթենք «ի խորոց սրտի», որ Աշխարհի Լույսը՝ Քրիստոս. պահե Ս. Էջմիածինը՝ մեր հավատքի ուխտավայրը, լուսահոսման անդորր փողփողումներուն մեջ, որպեսզի անիկա ինչպես ցարդ, այսուհետև ալ և ամեն ժամանակ շարունակե կատարել իր աստվածահաճո առաքելությունը՝ ներշնչելու, տպավորելու եղբայրության և հաճության վսեմ թելադրանքը իր կարգին շնորհելու համար բովանդակ մարդկության:

Կաղոթենք Ձեր Ս. Օծության առողջության և արևշատության համար: Կաղոթենք, որ շեն ու հոգեվարձ ըլլա Ձեր բարի հոգին և անտրտում Ձեր սրբապսակ ու իմաստուն ճակատը:

Անխախտ փարումով և ակնածանքով կհամբուրենք Ձեր Սուրբ Օծյալ Աջը»:

Ապա սրտառուչ խոսքով հանդես եկավ դոկտոր Թագվոր Էրքմանը, և՝ ուխտավորները առնելով Նորին Սրբության Աջը՝ երկյուղածությամբ հեռացան Մայր Աթոռից: